



Funded by  
the European Union



**National Endowment  
for Democracy**

*Supporting freedom around the world*

# «ԲԱՂԱԲԱՑԻ ԴԻՏՈՐ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԴԻՏՈՐԴԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԴԻՏՈՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդվածներ 32, 48, 50, 56, 67, 68, 71, 73)

### Դիտորդն իրավունք ունի

- ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին.
- ներկա գտնվել քվեարկության ընթացքին.
- ներկա գտնվել ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում և ռազմաբժշկական հաստատությունում, ինչպես նաև ձերբակալված անձանց պահպանման վայրերում քվեարկության կազմակերպմանը,
- լուսանկարել, տեսանկարահանել, ձայնագրել ընտրական հանձնաժողովների նիստերը (այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը), քվեարկության ընթացքը՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը (առանց որևէ մեկի թույլտվությունը հարցնելու).
- ազատ տեղաշարժվել քվեարկության սենյակում քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, ընտրողների ցուցակների ու քվեատուփի դիտարկման համար.
- ծանոթանալ տարածքային ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում.
- ծանոթանալ տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (*քացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների*), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը.
- ինքնուրույն կատարել քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (*քացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների*)՝ չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը.
- պահանջել արձանագրել քվեարկության կարգի խախտումների վերաբերյալ իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում.
- ստանալ քվեարկության մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի օրինակ՝ ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով.
- լուսանկարել կամ տեսանկարահանել ընտրական տեղամասում կազմված քվեարկության արդյունքների արձանագրությունը.

- ստանալ քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով.
- լուսանկարել, տեսանկարահանել վերահաշվարկի աշխատանքները.
- հետևել քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած ընտրողների ցուցակների սկանավորման աշխատանքներին.
- հայտնել կարծիք, անել հրապարակային հայտարարություն, այդ թվում՝ գանգվածային լրատվության միջոցներով, ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ.
- բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել է Ընտրական օրենսգրքով սահմանված իր իրավունքը:

### **Դիտորդը պարտավոր է՝**

- տեղամաս մուտք գործելուց հետո գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում.
- տեսանելի ձևով կրել ԿԸՀ-ի կողմից տրված վկայականը .
- ունենալ անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր կամ նույնականացման քարտ.
- լինել անկողմնակալ և չեզոք.
- հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ:

### **Դիտորդին արգելվում է՝**

- կատարել քաղվածքներ և նշումներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քվեարկության ընթացքում.
- միջամտել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին.
- իրականացնել քարոզչություն.
- տալ ցուցումներ, ներկայացնել պահանջներ ընտրական հանձնաժողովի անդամներին.
- օգնել քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին:

### **ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- Զվեարկության օրը ներկա լինել տեղամասում առավոտյան ժամը 06:45-ից և հսկել քվեարկության օրվա ողջ գործընթացը՝ սկսած տեղամասի բացումից մինչև քվեարկության արդյունքների ամփոփման ավարտը:
- Զվեարկության օրվա ընթացքում ուղարկել SMS հաղորդումներ համակարգող կենտրոն՝ համաձայն համապատասխան կողավորման:

- Իրավաբանական աջակցության անհրաժեշտության, լուրջ միջադեպերի և արտակարգ իրավիճակների դեպքում զանգահարել Զամակարգող կենտրոն:
- Տեսանկարահանել, լուսանկարահանել, ձայնագրել կամ այլ կերպ արձանագրել (պարզ թղթային արձանագրություն կազմելու միջոցով) բոլոր այն դեպքերը/դրվագները, որոնք հանդիսանում են ընտրական օրենսդրության խախտում կամ առերևույթ այդպիսիք են: Յնարավորության դեպքում ներգրավել վկաների:
- Դիտարկված բոլոր խախտումների և/կամ առերևույթ խախտումների վերաբերյալ տեղեկացնել Զանձնաժողովի նախագահին, դրանց կապակցությամբ պահանջել արձանագրել ձեր գնահատականը հանձնաժողովի գրանցամատյանում: Ներկայացված խախտման նկարագրությունը պետք է պարունակի խախտման փաստական հանգամանքների, ինչպես նաև այն կատարած անձանց տվյալների վերաբերյալ հնարավորինս հստակ և սպառիչ տեղեկություններ: Յետևել կատարված գրառման բովանդակային համապատասխանությանը իր կողմից մատնանշված խախտման փաստական տվյալներին:
- Չշեղվել դիտարկման գործառույթից աղմուկի, կուտակումների կամ այլ միջադեպերի դեպքում, բանի որ որպես կանոն հենց դրանց ժամանակ են տեղի ունենում բազմակի կամ այլ անձանց փոխարեն քվեարկություններ կամ լցոնումներ:
- Չմտնել բանավեճի մեջ և խուճապի չենթարկվել, եթե ձեզ անհիմն մեղադրում են հանձնաժողովի աշխատանքներին միջամտելու, խոչընդոտելու կամ քվեարկության բնականոն ընթացքը խաթարելու մեջ:
- Կատարած լուսանկարները, տեսանկարահանումները, ձայնագրությունները և այլ նյութերը ինտերնետ կապի միջոցով (առկայության դեպքում) ուղարկել համակարգողներին՝ նրանց կողմից նշված հասցեով:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից պահանջել և ստանալ տեխնիկական սարքավորման միջոցով տպվող տեղեկանքը քվեարկությանը մասնակցած անձանց վերաբերյալ:
- ՏԸՅ նախագահից պահանջել և ստանալ տվյալ տեղամասի քվեարկության արդյունքների արձանագրության բաղվածքը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով, և լուսանկարել արձանագրության բնօրինակը:
- Գիշերվա ընթացքում, հնարավորության դեպքում, խնդրում ենք համակարգողի կողմից նշված ինտերնետ հասցեով ուղարկել տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքի լուսանկարը, ամփոփման նիստի վերջում՝ ամբողջական (համապետական և տարածքային արդյունքներով) արձանագրության լուսանկարը, իսկ գրանցամատյանում գրանցված՝ հաշվարկի արդյունքների հետ անհամապատասխանության դեպքում՝ նաև գրանցամատյանի տվյալ էջի լուսանկարը:
- Քվեարկության արդյունքների ամփոփման նիստից հետո տուն վերադառնալու ճանապարհին կամ այլ համաձայնեցված կարգով համակարգողի նշած հասցեով հանձնեք՝

- տեսա-լուսանկարահանված նյութերը (եթե արդեն չեն ուղարկվել ինտերնետով),
- տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքը (տույնիսկ եթե ուղարկվել է ինտերնետով),
- քվեարկության արդյունքների արձանագրության քաղվածքը (ընօրինակ) ու ամբողջական արձանագրության լուսանկարները (տույնիսկ եթե վերջիններս արդեն ուղարկվել են ինտերնետով),
- տեսանկարահանող սարքերը և հիշողության կրիչները (ձեզ տրամադրված լինելու դեպքում):

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԴՐԱ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (07:00-08:00)**

Իրավաչափ գործընթաց	Արդյունավետ դիտարկման խորհուրդներ
<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովը (ՏԸՀ) սկսում է աշխատանքը ժամը 07:00-ին:</p> <p>Տեղամասը կահավորված է այնպես, որ ապահովի քվեարկության գաղտնիությունը և հնարավորություն ընձեռի ազատ տեղաշարժի և վերահսկողության համար:</p> <p>Չիրկիզվող պահարանը փակ է, քվեատուփը փակված է, կնքված:</p> <p>Տեղամասում առկա չեն քարոզչական նյութեր, քվեարկվող կուսակցական գործիչների նկարներ:</p> <p>Քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցվում են ընտրություններին մասնակցող կուսակցությունների համապետական և տարածքային ընտրական ցուցակները:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Եղեք տեղամասում ուղիղ ժամը 06:45-ին:</li> <li>• Գրանցվեք տեղամասի գրանցամատյանում:</li> <li>• Հետևեք, որ տեղամասի կահավորումն ապահովի քվեարկության գաղտնիությունը և գործընթացի արդյունավետ վերահսկողությունը:</li> <li>• Հետևեք, որ հանձնաժողովի նախագահը ոստիկանության ծառայողներից ընդունի չիրկիզվող պահարանը՝ ստուգելով վրան տոնձված և ստորագրված թղթի ամբողջականությունը և հանձնման ընդունման մասին գրանցամատյանում արձանագրվի:</li> <li>• Ստուգեք, որ տեղամասում և դրանից դուրս չլինեն քարոզչանյութեր:</li> <li>• Ստուգեք, որ տեղամասային կենտրոնում (ներսում կամ դրսում) փակցված լինեն ընտրողների ցուցակները և կուսակցությունների ընտրական ցուցակները:</li> <li>• Փորձեք համադրել հանձնաժողովի անդամների կողմից գործածվող ցուցակների և տեղամասային կենտրոնում փակցված ընտրողների ցուցակների թվային համապատասխանությունը:</li> <li>• Ստուգեք, որ ՏԸՀ-ն նիստը սկսվի քվեարկման առկայությամբ:</li> <li>• Հետևեք հանձնաժողովի անդամների պարտականությունների բաշխման վիճակահանության պատշաճ անցկացմանը (ըստ ազգանունների այբբենական հերթականության) և ճշգրիտ գրանցմանը գրանցամատյանում:</li> <li>• Գրանցեք Ձեզ մոտ հանձնաժողովի անդամների հերթափոխը (կարող եք լուսանկարահանել գրանցամատյանի համապատասխան էջը) և հետևեք դրա պահպանմանը օրվա ընթացքում:</li> <li>• Դիտարկեք քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պատշաճ գրանցումը, վկայականների առկայությունը:</li> <li>• Ծանոթացեք ՏԸՀ անդամների, վստահված անձանց և մյուս դիտորդների հետ. անհրաժեշտության դեպքում խնդրեք նրանց վկայականները:</li> </ul>

<p>ՏԸՀ-ն անցկացնում է վիճակահանություն (6 անգամ)՝ որոշելու ՏԸՀ յուրաքանչյուր անդամի գործառնություններն ու հերթափոխի գրաֆիկը:</p> <p>Քվեախցիկներում չօգտագործված քվեաթերթիկների արկղի մեջ առկա են յուրաքանչյուր կուսակցության /դաշինքի 3-5-ական քվեաթերթիկ:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Դիտարկեք տեխնիկական սարքավորումների աշխատանքի ստուգումը, տեղամասի նույնականացման տվյալների մուտքագրումը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք տեխնիկական սարքավորումների լիցքավորված լինելուն, կոդերին և դրանց ճշգրիտ մուտքագրմանը:</li> <li>• Յետևեք տեխնիկական սարքի միջոցով գրոյական տեղեկանքի տպմանը և տեղեկանքի տոնձմանը տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:</li> <li>• Յետևեք չիրկիզվող պահարանի բացմանը և դրանից ՏԸՀ անդամների անհատական կնիքների հանման և ըստ նախորդ օրն անցկացված վիճակահանության՝ ՏԸՀ անդամներին տրամադրմանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք տեղամասի կնիքը չիրկիզվող պահարանից հանելու և գրանցամատյանում դնելու հանգամանքին:</li> <li>• Չամոզվեք, որ քվեատուվը դատարկ է և պատշաճ փակված ու կնքված:</li> <li>• Ուշադրություն դարձրեք քվեաթերթիկների, ծրարների և ինքնաստոնձվող դրոշմանիշերի համապատասխան հանձնաժողովի անդամներին 100-ական հատկացմանը:</li> <li>• Եթե տեղամասում առկա է տեսախցիկ, ուշադրություն դարձրեք դրա պատշաճ տեղադրմանը և սարքինությանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք չօգտագործված քվեաթերթիկների արկղի մեջ Չանձնաժողովի նախագահի կողմից յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի 3-5-ական քվեաթերթիկների տեղադրման պահանջի կատարմանը:</li> </ul>
--	---

**ՔՎԵԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ (08:00-20:00)**

<p align="center"><b>Իրավաչափ գործընթաց</b></p>	<p align="center"><b>Արդյունավետ դիտարկման խորհուրդներ</b></p>
<p>Տեղամասը բացվում է ուղիղ ժամը 08:00-ին Տեղամասում գտնվում են միայն համապատասխան վկայական ունեցող լիազորված անձինք (վստահված անձանց դեպքում՝ 2, դիտորդների դեպքում՝ 1-ական անձ նույն կազմակերպությունից):</p> <p>Տեղամասից դուրս 50 մետր շառավղով չկան մարդկանց կամ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ուշադրություն դարձրեք ժամը 8:00-ի և 9:00-ի դրությամբ ՏԸՀ անդամների թվին:</li> <li>• Անհրաժեշտության դեպքում ծանոթացեք ՏԸՀ տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին՝ ՏԸՀ նախագահի կամ այլ անդամի ներկայությամբ:</li> <li>• Չամոզվեք, որ ընտրացուցակները լինեն ամուր կարված, չլրացված և/կամ չլինեն այլ նշումներ ընտրողների անունների դիմաց:</li> <li>• Յետևեք անձը հաստատող փաստաթղթի և ընտրողների ցուցակներում ընտրողի տվյալների համապատասխանությանը:</li> <li>• Յետևեք տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցմանը, ուշադրություն դարձրեք վառվող ազդանշաններին:</li> </ul>

<p>մեքենաների կուտակումներ, չկան ընտրողների խմբերով փոխադրումներ:</p> <p>Չկա ընտրակաշառքի բաժանում կամ խոստում, ընտրողների ուղղորդում:</p> <p>Ընտրողներին գրանցող տեխնիկական սարքավորումն աշխատում է անխափան և ընտրողների գրանցման հետ խնդիրներ չեն առաջանում:</p> <p>Մասնագետը ստուգում է ընտրողի ինքնությունը անձը հաստատող փաստաթղթով, փաստաթուղթը ներմուծում է սարքի մեջ և տպում է քվեարկության կտրոն (01.01.2008-ից հետո տրված փաստաթղթի դեպքում կտրոնը պետք է պարունակի ընտրողի լուսանկարը):</p> <p>Քվեախցիկում մեկ ընտրող է (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերից), չի խախտվում քվեարկության գաղտնիությունը:</p> <p>Գրանցամատյանում գրանցվում են ընտրողին քվեարկել օգնող անձի տվյալները, չկա նույն</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Չետևեք ընտրողի գրանցմանը՝ հատկապես ուշադրություն դարձնելով անձը հաստատող փաստաթղթի պատկանելությանը, մատնահետքի ներմուծման գործընթացին, դրա չընթերցման և մատնահետքի ներմուծման քայլը բաց թողնելու կրկնվող դեպքերին:</li> <li>• Չետևեք անձը հաստատող փաստաթուղթը չընթերցվելու դեպքում՝ ստեղնաշարով ներմուծվող տվյալների համապատասխանությանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք տպվող քվեարկության կտրոնի բովանդակած տեղեկությունների համապատասխանությանը ներկայացված անձը հաստատող փաստաթղթին:</li> <li>• Սարքի էկրանի կամ տպվող քվեարկության կտրոնի վրա լուսանկարի բացակայության դեպքում ուշադրություն դարձրեք անձը հաստատող փաստաթղթի տրման ժամկետին:</li> <li>• Ուշադրություն դարձրեք վավերականության ժամկետը լրացած փաստաթղթով քվեարկելու դեպքերին, երբ սարքը տվել է տեղեկատվություն վավերականության մեջ գտնվող անձը հաստատող այլ փաստաթղթի(երի) առկայության մասին:</li> <li>• Չիշեք ընտրողների դեմքերը, որ մեկ անձը չփորձի գրանցվել և քվեարկել մի քանի անգամ:</li> <li>• Դիտարկեք տեխնիկական սարքավորման աշխատանքը և դրա խափանումները (պարբերականություն, պատճառներ):</li> <li>• Դիտարկեք առանց տեխնիկական սարքավորման ընտրողներին գրանցելու պատշաճությունը:</li> <li>• Չետևեք տեղամասում կազմվող լրացուցիչ ցուցակում ընտրողների պատշաճ գրանցման, դատական ակտը կամ տեղեկանքը ցուցակին կցելու պահանջի պահպանմանը:</li> <li>• Չետևեք ընտրողների ցուցակում քվեարկողի տվյալների պատշաճ տողում ստորագրելու գործընթացին, իսկ ցուցակում ստորագրելու համար օգնություն տրամադրելու դեպքում՝ դրա անհրաժեշտության հիմնավորվածությանը, այդպիսի դեպքերի հաճախականությանը:</li> <li>• Ընտրողի անվան դիմաց ընտրողների ցուցակում ստորագրության առկայության դեպքում ուշադրություն դարձրեք, որ ընտրողը չզրկվի ընտրելու իրավունքից: Չետևեք նման դեպքերի պարբերականությանը:</li> <li>• Չետևեք ՏԸՉ անդամի կողմից իր անհատական կնիքը ընտրողների ցուցակում և քվեարկության կտրոնի վրա դնելու կարգի պահպանմանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ ընտրողին տրամադրելու և դրանք վերցնելու պահանջի կատարմանը:</li> <li>• Չսկեք, որ քվեախցիկում լինի միայն մեկ ընտրող (բացառությամբ սահմանված կարգով օգնող անձի</li> </ul>
--	--

<p>անձի կողմից ընտրողին մեկից ավելի անգամ օգնելու դեպք:</p> <p>Գրանցամատյանում գրանցվում են ՏՀՀ անդամի, վստահված անձի և դիտորդի՝ քվեարկության կարգի խախտման գնահատականները:</p> <p>Չի արձանագրվել չօգտագործած քվեաթերթիկների դուրս հանում ընտրողի կողմից:</p> <p>Քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը դատարկում է քվեարկության խցիկներում տեղադրված չօգտագործված քվեաթերթիկների արկերի պարունակությունը լցվելու դեպքում՝ թողնելով որոշակի քանակի քվեաթերթիկներ:</p> <p>Տեղամասում և տեղամասից դուրս չի կատարվում քարոզչություն:</p> <p>Ոստիկանության աշխատողը մուտք է գործում տեղամաս միայն ՏՀՀ նախագահի պահանջի դեպքում:</p>	<p>Ներկայության դեպքի):</p> <ul style="list-style-type: none"> <li>• Չսկեք, որ մեկ անձն օգնի ընտրողին միայն մեկ անգամ և նրա տվյալները գրանցվեն գրանցամատյանում:</li> <li>• Չսկեք, որ ընտրողին օգնող անձը չլինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, ՀԼՄ ներկայացուցիչ, այցելու:</li> <li>• Ուշադրություն դարձրեք զինծառայողների քվեարկության գաղտնիությանը:</li> <li>• Չսկեք քվեատուփը, որպեսզի չլինեն լցումներ:</li> <li>• Չետևեք քվեատուփի համար պատասխանատու անդամի կողմից քվեարկողի անձը հաստատող փաստաթղթի սուուգմանը՝ ըստ հանձնաժողովի անդամների կամ վստահված անձանց պահանջի:</li> <li>• Չետևեք քվեարկության կտրոնը քվեատուփի համար պատասխանատու անդամին չհանձնելու դեպքում՝ քվեարկության ծրարը անհապաղ մարելու պահանջի պահպանմանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք չօգտագործած քվեաթերթիկները ընտրողների կողմից դուրս հանելու փորձերին:</li> <li>• Չետևեք չօգտագործված քվեաթերթիկների պարկը տեղամասից դուրս հանելու դեպքերին կամ դրանց տեսակավորելու/հաշվելու փորձերին:</li> <li>• Չետևեք 3 ժամը մեկ պարբերականությամբ տեղամասում մասնակցության թվի հաշվարկին և հաղորդմանը:</li> <li>• Չսկեք, որ տեղամասի ներսում և դրսում չիրականացվի ընտրողների ուղղորդում: Նման դեպքերում ճշտեք ուղղորդողի անձը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք, թե որ կազմակերպության դիտորդներն ու ՀԼՄ ներկայացուցիչներն են դրսևորում կողմնակալ վարքագիծ:</li> <li>• Դիմեք ՏՀՀ նախագահին կամ քարտուղարին՝ քվեարկության կարգի խախտման վերաբերյալ ձեր գնահատականը գրանցամատյանում գրանցելու համար:</li> <li>• Դիտարկեք քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ինքնությունը, պատշաճ գրանցումը, վկայականների առկայությունը և ելումուտը:</li> <li>• Չետևեք ՏՀՀ անդամների ըստ վիճակահանության պարտականությունների կատարմանը և երկու ժամյա պարբերականությամբ ռոտացիային:</li> <li>• Ուշադրություն դարձրեք քվեարկության կտրոնների և դրոշմանիշների հանձնման-ընդունմանը, դրանց պատշաճ հաշվարկին և գրանցամատյանում արձանագրմանը:</li> <li>• Երբեմն դիտարկեք տեղամասից դուրս մարդկանց և մեքենաների կուտակումների դեպքերը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք շրջիկ արկղը մինչև ժամը 20:00-ն տեղամաս հետ քերելու, պատշաճ փակված լինելու և բոլորի համար տեսանելի տեղում դնելու հանգամանքին, ինչպես նաև դրա պարունակությունը քվեատուփի մեջ լցնելուն:</li> </ul>
--	--



<p>Շրջիկ արկղով քվեակուրսային կազմակերպման դեպքում ժամը 20:00-ի դրությամբ շրջիկ արկղը հատուկ կապիչով փակված վիճակում գտնվում է տեղամասում, բոլորի համար տեսանելի տեղում:</p> <p>Հանձնաժողովի նախագահը մինչև ժամը 20:00-ն բոլորի ներկայությամբ հանում է քվեարկության ծրարները շրջիկ արկղից և զգում տեղամասի քվեարկության տուփի մեջ:</p>	<p><b>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ</b>  <b>Քվեարկության ողջ ընթացքում դիտորդները պետք է ուշադրության կենտրոնում պահեն տեխնիկական սարքավորումները, ընտրողների ցուցակները, քվեախցիկները, քվեատուփը և չօգտագործված քվեաթերթիկներով լցված պարկը:</b></p>
--	---

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ (20:00-ից հետո)**

<b>Իրավաչափ գործընթաց</b>	<b>Արդյունավետ դիտարկման խորհուրդներ</b>
<p>Տեղամասը փակվում է ուղիղ 20:00-ին:</p> <p>Քվեարկության արդյունքների ամփոփումն ընթանում է առանց ընդհատման՝ մինչև արդյունքների արձանագրության կազմումը:</p> <p>ՏԸՀ գործողություններն են</p> <ul style="list-style-type: none"> <li>• ՏԸՀ անդամների անհատական կնիքները դրվում են փաթեթի մեջ, կնքվում և տեղադրվում պարկում.</li> <li>• ընտրողների ցուցակում ստորագրությունների հիման վրա</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Կարող եք համակարգողի հետ համաձայնեցնելով հաշվարկը սկսելուց առաջ գնալ մոտակա չվերահսկվող այլ տեղամաս:</li> <li>• Յետևեք, որ ժամը 20:00-ի դրությամբ տեղամասում գտնվող ընտրողներին տրվի քվեարկելու հնարավորություն:</li> <li>• Ուշադիր եղեք քվեարկության ավարտից անմիջապես հետո քվեատուփի ճեղքի պատշաճ փակմանը:</li> <li>• Յետևեք, որ ամփոփման նիստն իրականացվի առանց ընդհատումներ և ընդմիջումների:</li> <li>• Յետևեք, որ տեղամասում լինեն միայն ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք:</li> <li>• Յետևեք ՏԸՀ անդամների կնիքների հավաքման և դրանց պատշաճ փաթեթավորմանն ու կնքմանը:</li> <li>• Ընտրողների ստորագրած ցուցակներում (այդ թվում լրացուցիչ) առկա ստորագրությունների ճշգրիտ հաշվարկին, այդ տվյալի վերադաս հանձնաժողովին ճշգրիտ փոխանցմանը, ճշգրիտ հրապարակմանը և արձանագրմանը գրանցամատյանում:</li> </ul>

<p>հաշվարկվում է քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը.</p> <ul style="list-style-type: none"> <li>• տեխնիկական սարքավորման միջոցով տպվում է մասնակցության վերաբերյալ տեղեկանքը.</li> </ul> <p>Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին գրառում է կատարվում գրանցամատյանում:</p> <p>Տեղեկանքի մեկական օրինակ՝ ստորագրված ՏԸՀ նախագահի կողմից և կնքված ՏԸՀ կնիքով, տրամադրվում է թեկնածուներին, դիտորդներին և վստահված անձանց՝ ըստ պահանջի:</p> <p>Այնուհետ հաշվարկվում են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ընտրողներից ստացված քվեարկության կտրոնները</li> <li>• չօգտագործված ինքնասուսնծվող դրոշմանիշերը</li> <li>• չօգտագործված քվեարկության կտրոնները</li> <li>• չօգտագործված քվեաթերթիկներն առանց հաշվարկվելու փաթեթավորվում են:</li> </ul> <p>Այս թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:</p> <p>ՏԸՀ նախագահը</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ուշադիր եղեք տեխնիկական սարքավորման միջոցով քվեարկության մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի պատշաճ տպմանը, այդ տեղեկանքի բովանդակությանը <i>(տեղամասի համարը, սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարները և *-ով նշում ստեղնաշարով մուտքագրման դեպքում)</i>, տեղեկանքը նախագահի կողմից ստորագրելուն, կնքելուն և պարկի մեջ տեղադրելուն:</li> <li>• Պահանջեք տեղեկանքի օրինակը՝ ստորագրված ՏԸՀ նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով:</li> <li>• Ուշադրություն դարձրեք ընտրողների ցուցակների <i>(բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակների)</i> փաթեթավորմանը, կնքմանը և ստորագրմանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակների առանձին փաթեթավորմանը, կնքմանը և պարկում տեղադրմանը:</li> <li>• Չեղանք ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված և համարակալված քվեարկության կտրոնների ճշգրիտ հաշվարկին, դրանց թվի ճշգրիտ արձանագրմանը գրանցամատյանում, պատշաճ փաթեթավորմանը և պարկում տեղադրմանը:</li> <li>• Չեղանք չօգտագործված ինքնասուսնծվող դրոշմանիշերի, չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնների ճշգրիտ հաշվարկին, դրանց թվի ճշգրիտ արձանագրմանը գրանցամատյանում, պատշաճ փաթեթավորմանը և պարկում տեղադրմանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք չօգտագործված քվեաթերթիկների առանց հաշվելու պատշաճ փաթեթավորմանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք կատարված գործողությունների արդյունքների հրապարակմանը, գրանցամատյանում ճշգրիտ արձանագրմանը և հետագայում արդյունքների ամփոփման արձանագրության մեջ ճշգրիտ արտացոլմանը (անհամապատասխանության դեպքում՝ լուսանկարել նաև գրանցամատյանի համապատասխան էջը):</li> <li>• Չեղանք քվետառուվող բացելու, քվեարկության ծրարները մեկ առ մեկ հանելու, դրանց միջից քվեաթերթիկները հանելու, դրանց սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու, վավեր կամ անվավեր լինելու հանգամանքին,</li> </ul>
---	--

<ul style="list-style-type: none"> <li>• բացում է քվեատուփը</li> <li>• քվեատուփից հանում է մեկական ծրար</li> <li>• ցուցադրում է ծրար բոլորին</li> <li>• քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը</li> <li>• հայտարարում է քվեաթերթիկի սահմանված/չսահմանված՝ նմուշի լինելու մասին և վավեր/անվավեր լինելու մասին</li> <li>• հայտարարում է, որ կուսակցության օգտին է քվեարկված</li> <li>• ցուցադրում է քվեաթերթիկը բոլորին, իսկ պահանջի դեպքում՝ փոխանցում ՏԸՀ մյուս անդամներին</li> <li>• առարկության դեպքում քվեարկության է դնում ՏԸՀ անդամի առաջարկությունը, իսկ առարկություն չլինելու կամ դրա չընդունվելու դեպքում՝ քվեաթերթիկը դրվում է տվյալ կուսակցության քվեաթերթիկների մեջ:</li> </ul> <p>Կուսակցությունների քվեաթերթիկները տեսակավորելուց</p>	<p>դրանց պատշաճ հրապարակմանը և ցուցադրմանը, դրանց ճշգրիտ տեսակավորմանը, ինչպես նաև առարկությունների դեպքում քվեարկության պատշաճ կազմակերպմանը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուշադրություն դարձրեք քվեարկության ծրարի մեջ քվեաթերթիկից բացի այլ առարկաների՝ թուղթ, թել և այլն, առկայությանը:</li> <li>• Չետևեք, որ քվեաթերթիկը դրվի համապատասխան տրցակի վրա՝ ուշադրություն դարձնելով քվեաթերթիկների սև եզրագծերին:</li> <li>• Չետևեք ըստ կուսակցությունների տեսակավորված քվեաթերթիկների ճշգրիտ հաշվարկին, ստացված թվերի ճշգրիտ հրապարակմանը և արձանագրմանը գրանցամատյանում:</li> <li>• Ուշադրություն դարձրեք քվեաթերթիկները տեսակավորելուց հետո քվեաթերթիկների երկրորդ էջի վավերականությանն ու անվավերությանը, պատշաճ ցուցադրմանը, յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների ճշգրիտ տեսակավորմանը, ինչպես նաև առարկությունների դեպքում քվեարկության պատշաճ կազմակերպմանը:</li> <li>• Չսկեք տեսակավորված քվեաթերթիկների թվի ճշգրիտ հաշվարկը, հրապարակումը և գրանցամատյանում արձանագրումը, այնուհետև պատշաճ փաթեթավորումը:</li> <li>• Չետևեք, որ հաշվարկի ժամանակ սեղանի վրա չլինի գրիչ կամ մատիտ, գրիչ կարող է լինել միայն քարտուղարի մոտ:</li> <li>• Ուշադրություն դարձրեք, որ քվեաթերթիկների հաշվարկի արդյունքը քարտուղարը գրանցի գրիչով, որպեսզի հետագայում հնարավոր չլինի ուղղումներ կատարել:</li> <li>• Տեղամասում լույսերը անջատվելու դեպքում օգտվեք լապտերից և այն ուղղեք քվեատուփի և հաշվարկվող քվեաթերթիկների վրա:</li> <li>• Չետևեք քվեարկության արդյունքների գրիչով ճշգրիտ գրանցմանը գրանցամատյանում և դրանց ճշգրիտ արտացոլմանը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ, ինչպես նաև արձանագրության պատշաճ ստորագրմանը և կնքմանը:</li> <li>• Ուշադրություն դարձրեք հանձնաժողովի անդամների կողմից հաշվարկի կարգի վերաբերյալ առարկություն ունենալու և հատուկ կարծիք ներկայացնելու դեպքերին և դրանց պատշաճ արձանագրմանը:</li> <li>• Պահանջեք քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված ՏԸՀ</li> </ul>
--	--

հետո ՏԸՀ-ն, ըստ առավել թվով ձայների ստացած կուսակցությունների հերթականության, հաշվարկում է կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը՝ ըստ քվեաթերթիկի 2-րդ էջում կատարված նշումի:

Քվեարկության արդյունքների արձանագրությունը կազմվում է 4 օրինակից. մեկը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակի կողքին, մյուսը՝ տեղադրվում է պարկում և 2-ը՝ ուղարկվում տարածքային հանձնաժողով:

Արձանագրության կազմումը պետք է ավարտվի մինչև քվեարկության հաջորդ օրվա ժամը 08:00-ը:

Նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

- Լուսանկարեք արձանագրության բնօրինակն ամբողջությամբ:
- Փորձեք լուսանկարել անվավեր այն քվեաթերթիկները, որոնց վրա ընտրողներն արել են իմաստ պարունակող գրառումներ:

### **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

- Սահմանված նմուշի քվեաթերթիկ է համարվում ԿԸՀ-ի կողմից հաստատված նմուշի քվեաթերթիկը, որը հանվել է ծրարից, և որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնաստանձվող դրոշմանիշը:
- Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե ներառում է ավելորդ գրառում:
- Ավելորդ գրառում պարունակող քվեարկության ծրարի դեպքում քվեաթերթիկը ծրարից չի հանվում, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է:
- Քվեարկության ծրարի մեջ մեկից ավելի քվեաթերթիկներ գտնվելու դեպքում հաշվարկում ընդգրկվում է միայն ինքնաստանձվող դրոշմանիշ պարունակող քվեաթերթիկը:
- Եթե քվեաթերթիկը երկրորդ էջում ներառում է մեկից ավելի թեկնածուների օգտին նշումներ կամ որևէ նշում չի ներառում, կամ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը, ապա քվեաթերթիկը մնում է միայն ընտրություններին մասնակցող կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթում:
- Հաշվարկին ներկա գտնվող անձանց պահանջով նրանց տրամադրվում է քվեարկության արձանագրությունից քաղվածք՝ վավերացված ՏԸՀ նախագահի և քարտուղարի ստորագրություններով և ՏԸՀ կնիքով:

## **ՀԻՇՇՔ ԵՎ ԿԱՏԱՐՇՔ**

**Տեղամասում զինծառայողների քվեարկության դեպքում փորձեք ճշտել/հաշվել նրանց թիվը (դիտարկելով նաև սարքի էկրանը), հրամանատարների առկայությունը տեղամասում և նրանց կողմից ուղղորդումը կամ զինվորների ընտրության գաղտնիության խախտումը:**

**Տեխնիկական սարքավորման դեղին կամ կարմիր ազդանշանի դեպքում ֆիքսեք տվյալ անձի անուն, ազգանունը և հայրանունը:**

**Այլ անձի կամ իր անձը հաստատող այլ փաստաթղթով գրանցվելու, ինչպես նաև ընտրողների ցուցակում ընտրողի անվան դիմաց ստորագրության առկայության դեպքում ֆիքսեք տվյալ անձի և համապատասխան ընտրողների անունները:**

**Քվեարկության ծրարի մեջ քվեաթերթիկից բացի այլ առարկաների առկայության դեպքում հաշվեք այդպիսի դեպքերի հաճախականությունը:**

**Տեսանյութերն ու լուսանկարներ ունենալու դեպքում՝ նշել դրանց համառոտ նկարագրությունը և ժամանակահատվածը:**

## **ԻՆՉ ԱՆԵԼ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

- Խախտում նկատելիս այն տեսա-լուսանկարահանեք կամ ձայնագրեք դեպքը (կախված ունեցած միջոցից): Եթե բացակայում է որևէ տեխնիկական միջոց, ապա ներգրավեք ականատեսների և ինքնուրույն կազմեք թղթային արձանագրություն: Խախտման դեպքի վերաբերյալ կարող եք ձայնագրման կամ տեսանկարահանման միջոցով ապացույցներ հավաքել՝ գրուցելով այլ անձանց հետ:
- Տեղեկացրեք խախտման մասին տեղամասային հանձնաժողովի նախագահին: Պահանջեք, որպեսզի Ձեր կողմից դիտարկված խախտման վերաբերյալ Ձեր գնահատականն արձանագրվի գրանցամատյանում:

- SMS հաղորդագրություն ուղարկեք համակարգող կենտրոն՝ ուղեցույցի ներդիրում նշված համարներով: Համակարգող կենտրոնից հետադարձ գանգի դեպքում նկարագրեք միջադեպերը՝ պատասխանելով ի՞նչ, ե՞րբ, ո՞վ, ովքե՞ր էին ակնատես, ի՞նչ քայլեր եք ձեռնարկել և ինչպե՞ս է արձագանքել հանձնաժողովը հարցերին:
- Պատրաստ եղեք հանդես գալու որպես բողոք ներկայացնող կողմ և իրավաբանական աջակցության պայմաններում վիճարկել ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), որոնց արդյունքում խախտվել են Ձեր իրավունքները, տալ բացատրություններ և ցուցմունքներ, մասնակցել վարչական, դատական վարույթների:

## ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

- Նախապես զանգահարեք և ծանոթացեք ձեր գործընկերոջ հետ: Եթե միևնույն բնակավայրից եք, համատեղ որոշեք, թե որ հասցեով է նպատակահարմար պատվիրել տաքսին և ինչ հերթականությամբ այն պետք է ձեզ վերցնի: Զվեարկությունից մեկ օր առաջ մինչև ժամը 18:00 զանգահարեք Ձեզ համակարգողների կողմից նախապես ձեզ տրամադրված տաքսի ծառայությունների հեռախոսահամարներով և հաջորդ օրվա համար պատվիրեք տաքսի: **Նախապես հաշվարկեք ճանապարհի տևողությունը և տեղամասում եղեք ոչ ուշ քան առավոտյան ժ. 6:45-ին:** Եթե Դուք և Ձեր գործընկերները բնակվում եք տարբեր վայրերում, պայմանավորվեք հանդիպել ճանապարհին կամ տեղամասում:
- Ձեզ տեղամաս տեղափոխող մեքենայի վարորդից վերցրեք նրա անձնական հեռախոսահամարը և պայմանավորվեք գիշերը կամ լուսադեմին ձեր վերադարձն ապահովելու մասին: Կապվեք առավոտյան միասին տեղամաս մեկնած Ձեր գործընկերների հետ և կազմակերպեք ձեր համատեղ վերադարձը: **Վարորդների վճարումը կկատարվի Համակարգող կենտրոնի կողմից:**

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Զվեարկության ողջ օրվա ընթացքում գործընկերոջ հետ աշխատեք համաձայնեցված՝ բաշխելով պարտականությունները և անհրաժեշտության դեպքում՝ օգնելով միմյանց:**

**Ուշադրության կենտրոնում պահեք տեխնիկական սարքավորումները, ընտրողների ցուցակները, քվեախցիկները, քվեատուփը, չօգտագործված քվեաթերթիկներով լցված պարկը, տեսակավորված քվեաթերթիկները, արդյունքների արձանագրումը՝ գրանցամատյանում և դրան համապատասխան արձանագրության կազմումը:**

## ԿԱՐԵԿՈՐ

Իրեն կամ գործընկերոջը տեղամասային կենտրոնից հեռացնելու կամ դրա հավանականության, ինչպես նաև իրենց անվտանգությանը սպառնացող որևէ խնդրի դեպքում  
**դիտորդը պետք է անհապաղ տեղեկացնի համակարգող կենտրոնին:**

## ԱՆՐԱԺԵՇՏ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

**Քվեարկության օրը տևից դուրս գալիս Ձեզ հետ վերցրեք**

- Անձնագիր / Նույնականացման քարտ
- Դիտորդի վկայական
- Մուտք և ջուր
- Ցավագրկող դեղորայք
- Հարմար ու տաք հագուստ, ցածրակրունկ կոշիկներ
- Թուղթ ու գրիչ
- Լուսարձակ/լապտեր
- Բջջային հեռախոս, տեսա-լուսանկարահանող սարք
- Լիցքավորող սարքեր / երկարացման լար
- Գումար
- **Քվեարկության օրվա խախտումների մասին հաղորդումների ՀՈՒՇԱԹԵՐԹԸ և ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ**

## ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

- Դիտորդը պետք է լինի չեզոք և անկողմնակալ, հրապարակայնորեն քաղաքական նախապատվություն կամ կողմորոշում չարտահայտի ընտրություններին մասնակցող որևէ քաղաքական կուսակցության (դաշինքի) կամ թեկնածուի նկատմամբ:
- Դիտորդը պետք է գերծ մնա ցանկացած գործողություն կատարելուց, որը կմեկնաբանվի որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (դաշինքի) կամ թեկնածուի օգտին:
- Դիտորդը պետք է մասնակցի դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության կազմակերպած վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև դիտորդների աշխատանքների կազմակերպման հետ կապված այլ միջոցառումներին, որոնց մասին նա ծանուցվում է:
- Դիտորդը պետք է բարեխղճորեն և լիարժեք կատարի դիտորդական առաքելությունը՝ առաջնորդվելով ՀՀ ընտրական օրենսդրությամբ սահմանված իրավունքներով և պարտականություններով, սույն վարքագծի կանոններով, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության կողմից տրված հրահանգներով և ուսումնական նյութերով:

- Դիտորդն իր առաքելությունը պետք է իրականացնի առանց ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը խոչընդոտելու և/կամ քվեարկության բնականոն ընթացքը խաթարելու՝ չմիջամտելով ընտրական հանձնաժողովների աշխատանքներին և քվեարկության գործընթացին:
- Դիտորդը պարտավոր է բարեխղճորեն կատարել դիտորդական առաքելությունը՝ հետևելով Համակարգող կենտրոնից տրվող հրահանգներին:
- Քվեարկության կարգի հետ կապված հարցերով, դիտորդություններով և առաջարկություններով դիտորդն իրավունք ունի դիմելու միայն տեղամասային հանձնաժողովի նախագահին, իսկ դիտարկված խախտումների իր գնահատականն արձանագրելու պահանջով դիտորդն իրավունք ունի դիմել նաև տեղամասային հանձնաժողովի քարտուղարին:
- Դիտորդը կարող է տեղամասից կարճատև բացակայել միայն անհրաժեշտության դեպքում՝ վստահ լինելով, որ թիմակիցը մտում է տեղամասում: Չնախատեսված կամ արտակարգ դեպքերում տեղամասային կենտրոնից դուրս գալիս դիտորդը պետք է անհապաղ տեղեկացնի համակարգողին՝ դուրս գալու պատճառների և տևողության մասին:
- Դիտորդին արգելվում է հանձնաժողովի անդամներից, վստահված անձանցից, ինչպես նաև տեղամասային կենտրոնում գտնվող այլ անձանցից ընդունել ցանկացած նվեր, դրամ, սնունդ, խմիչք կամ որևէ այլ հյուրասիրություն:
- Դիտորդը չպետք է լքի տեղամասը, եթե նրան գրուցելու կամ այլ պատրվակով հրավիրում են տեղամասից դուրս:
- Դիտորդը պետք է հնարավորինս ձեռնպահ մնա անձնական տվյալներ (օրինակ՝ հեռախոսահամար, հասցե, ընտանիքի, բնակավայրի, ընկերների և հնարավոր ծանոթների մասին տեղեկատվություն) տրամադրելուց:
- Դիտորդը չպետք է առանց հսկողության թողնի իր իրերը:
- Լրատվամիջոցներին հարցազրույց տալիս դիտորդը պետք է հիմնվի միայն իր կողմից անձամբ դիտարկված փաստերի վրա՝ առանց գնահատականներ տալու՝ հարցազրույցի մասին տեղեկացնելով համակարգող կենտրոնին:
- Դիտորդն իրեն տեղամասային կենտրոնից հեռացնելու առաջին իսկ նախադրյալների առկայության, ինչպես նաև իր կամ իր գործընկերոջ անվտանգությանն առնչվող խնդիրների առաջացման դեպքում պետք է այդ մասին անհապաղ տեղեկացնի համակարգող կենտրոնին:
- Դիտորդը համակարգողին պետք է անմիջապես տեղեկացնի ցանկացած հանգամանքի մասին, որը կարող է խոչընդոտել կամ արգելք հանդիսանալ իր կողմից դիտորդական առաքելության պատշաճ իրականացմանը:
- Դիտորդը պետք է համերաշխ աշխատի թիմակից դիտորդի կամ ՉԼՍ ներկայացուցչի հետ:
- Բոլորի հետ դիտորդը պետք է խոսի հարգալից, հանգիստ տոնով և չվիճաբանի հանձնաժողովի անդամների կամ քվեարկության այլ մասնակիցների հետ:
- Դիտորդական առաքելության ողջ ընթացքում դիտորդը պարտավոր է ցուցաբերել բարձր պրոֆեսիոնալիզմ և անձնական անթերի վարքագիծ: